ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2024 թվականի N 200– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հունվարի 10-ի N 7-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 19-ին կայացած նիստի N 14 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 47 /քառասունյոթ/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 2 525 000 /երկու միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-07-19 16:18:33 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024թ. հուլիսի 19
ք.Իջևան